# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի**

**15.08. 2023թ. նիստի**

**Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:**

**Նիստին ներկա էին ռեկտորատի 12 (տասներկու) անդամից 11-ը (տասնմեկը):**

**Նիստին մասնակցում էին՝**

1. Ե. Սերոբյան՝ Ռեկտոր
2. Ն. Ավետիսյան՝ ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ,
3. Գ. Նիկողոսյան՝ Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Կ. Պետրոսյան՝ Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
5. Վ. Խաչատրյան՝ Արհեստակցական կազմակերպության նախագահ,
6. Լ. Մարգարյան՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն,
7. Հ. Մելքոնյան՝ Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն,
8. Լ. Մարտիրոսյան՝ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
9. Օ. Հովհաննիսյան՝ հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ,
10. Ա. Հովհաննիսյան՝ Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի պետ,
11. Ռ. Քալաջյան՝ Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. **Բուհի 90 ամյա հոբելյանի հետ կապված նախապատրաստական աշխատանքների մասին**

2. **Բուհում դիմորդների նախապատրաստական դասընթացների կազմակերպման մասին**

1.ԼՍԵՑԻՆ՝

Բուհի 90 ամյա հոբելյանի հետ կապված նախապատրաստական աշխատանքների մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ համալսարանում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում 11.08. 2023թ.-ին իր կողմից հրաման է ստորագրվել ռեկտորատի նոր կազմ հաստատելու վերաբերյալ և շնորհավորեց ռեկտորատի կազմի նոր անդամներին:
Այնուհետև պարոն Սերոբյանը նշեց, որ Բուհի 90-ամյա հոբելյանի հետ կապված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ձևավորել կազմ-կոմիտե և հանձնարարեց ռեկտորատի անդամներին իրենց առաջարկությունները գրավոր ներկայացնել ռեկտորին՝ հոբելյանի կազմակերպման և իրականացման հետ կապված:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ռ. Քալաջյանը, Լ. Մարտիրոսյանը:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց նաև, որ ռազմական ամբիոնի շենքի բակում տեղադրված քարը, որը նվիրված է եղել նախկին ինստիտուտի երկրաշարժին զոհվածների հիշատակին, և որը ուսանողների ջանքերով է տեղադրվել, տեղափոխվել է ՇՊՀ-ի բակ, քանի որ նախկին տեղում շատ անխնամ էր և առաջարկեց միջոցառում կազմակերպել և հուշարձան-քարը նվիրել բուհի և՛ երկրաշարժի, և՛ Հայաստանի անկախության համար իրենց կյանքը տված ուսանողների ու աշխատակիցների հիշատակին, բացումը կազմակերպել սեպտեմբերի 1-ին առաջին կուրսեցիներին ուսանողական տոմսերի հանձնման արարողության ժամանակ:
Պարոն Նիկողոսյանը առաջարկեց հուշարձան-քարի բացումը կազմակերպել սեպտեմբերի 18-ին՝ խաչվերաց տոնին:
ՈՐՈՇԵՑԻՆ՝
Ընդունել ի գիտություն
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

2. **Բուհում դիմորդների նախապատրաստական դասընթացների կազմակերպման մասին**

Պարոն Սերոբյանն առաջարկեց, որ բուհում կազմակերպվեն վճարովի նախապատրաստական դասընթացներ ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների

աշակերտների համար՝ բուհերի ընդունելության քննություններին պատրաստվելու նպատակով՝ բոլոր առարկաների գծով: Պարոն Սերոբյանը նշեց, որ գործընթացը պետք է կազմակերպվի բուհի Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի կողմից:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գ. Նիկողոսյանը, Լ. Մարտիրոսյանը, Ա. Գարեգինյանը:

Պարոն Վ. Խաչատրյանը հարցադրում կատարեց, թե ինչու՞ են կրկնակի վճարում, որ դիմորդը ընդունելության քննությունները հանձնի և նկատեց, որ ինքը համաձայն չէ այս գործընթացի հետ, քանի որ դպրոցում սովորելուց հետո նորից նախապատրաստական դասընթացներ են անցկացվելու:
Պարոն Սերոբյանը հակադարձեց, որ բարձրացրած հարցը հռետորական է:
Պարոն Նիկողոսյանը նկատեց, որ բոլոր աշակերտները գիտելիքների նույն մակարդակը չեն կարող ունենալ, ուստի բուհը առաջարկում է նման ծառայություն մատուցել և ովքեր համաձայն են կմասնակցեն գործընթացին:
Քննարկման արդյունքում որոշեցին յուրաքանչյուր առարկայի դասընթացի համար մեկ ամսվա վճարը սահմանել 15 000 ՀՀ դրամ, դասընթացներն իրականացնել սույն թվականի սեպտեմբերից մինչև 2024թ.-ի հունիսի 1-ը՝ շաբաթական 3օր՝ օրական 90 րոպե տևողությամբ: Խմբերը կձևավորվեն ութ և ավել մասնակիցների առկայության պարագայում:
Պարոն Սերոբյանն առաջարկեց, որ դասընթացի մասնակից այն 12-րդ դասարանցիները, ովքեր կընդունվեն ՇՊՀ, նրանց վերադարձնել այդ ուսարվա վարձավճարի 30 տոկոսը:
Ռեկտորատի անդամների կողմից առաջարկը հավանության արժանացավ:

## ՈՐՈՇԵՑԻՆ՝

2023-2024 ուսումնական տարում ՇՊՀ-ում կազմակերպել վճարովի նախապատրաստական դասընթացներ ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտների համար՝ բուհերի ընդունելության քննությունների բոլոր առարկաների գծով:

- Յուրաքանչյուր դասընթացի համար մեկ ամսվա վճարը սահմանել 15 000 ՀՀ դրամ, դասընթացներն իրականացնել սույն թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2024թ.-ի հունիսի 1-ը, շաբաթական 3 օր՝ օրական 90 րոպե տևողությամբ:
- Խմբերը ձևավորել ութ և ավել մասնակիցների առկայության պարագայում:
- Դասընթացի մասնակից՝ ՇՊՀ ընդունված դիմորդներին վերադարձնել այդ ուսարվա վարձավճարի 30 տոկոսը:
-

## ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝10, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝
ռեկտոր — Ե. Սերոբյան

ՈՒսումնամեթոդական
գործընթացի կառավարման
կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի
ԺՊ — Ն. Ավետիսյան

Պրոռեկտոր-աշխատակազմի
ղեկավարի ԺՊ — Գ. Նիկողոսյան

Ռեկտորատի քարտուղար,
գիտական քարտուղար՝ — Կ. Պետրոսյան

Արհեստակցական
կազմակերպության նախագահ՝ — Վ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկան՝ — Լ. Մարտիրոսյան

Հասարակական գիտությունների
ֆակուլտետի դեկանի ԺՊ՝ — Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ — Ա. Մկրտչյան

Գիտական քաղաքականության և
նորարարության կենտրոնի
տնօրեն՝ — Լ. Մարգարյան

Արտաքին համագործակցության
կենտրոնի տնօրեն՝ — Հ. Մելքոնյան

Մարդկային ռեսուրսների
կառավարման,
փաստաթղթաշրջանառության և
իրավական ապահովման բաժնի
պետ՝ — Ա. Հովհաննիսյան

Ֆինանսական
ռեսուրսներիկառավարման և
Հաշվառման բաժնի պետ — Ռ. Քալաջյան